

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՈՒԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՎ ամրապնդելու համագործակցությունը անօրինական միգրացիայի դեմ առավել արդյունավետ պայքարի ոլորտում,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ սույն Համաձայնագրի միջոցով և փոխադարձության հիման վրա մշակել արագ և արդյունավետ ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման, անվտանգ և կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի Հանրապետության կամ Վրաստանի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար սահմանված պահանջները, և դիտարկել այդ անձանց տարանցումը համագործակցության ոգով,

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ ԻՐԵՆՑ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ 1948 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, 1950 թվականի նոյեմբերի 4-ի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, 1966 թվականի դեկտեմբերի 16-ի՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի, 1951 թվականի հուլիսի 28-ի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի և 1967 թվականի հունվարի 31-ի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» արձանագրության, 1984 թվականի դեկտեմբերի 10-ի՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի, ինչպես նաև հանձնման (էքստրադիցիայի) հարցերով միջազգային պայմանագրերի հիմքում

ընկած նպատակներին և սկզբունքներին,
համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակներով՝

a) «հետընդունում (ռեադմիսիա)» նշանակում է՝ Հայցող [հարցում ներկայացրած] պետություն անօրինականորեն մուտք գործած, այնտեղ գտնվող կամ բնակվող անձանց (Հայցվող [հարցում ստացած] պետության քաղաքացիներ, երրորդ երկրի քաղաքացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձինք) փոխանցում Հայցող պետության կողմից և նրանց ընդունում Հայցվող պետության կողմից՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան.

b) «Հայաստանի Հանրապետության քաղաքացի» նշանակում է՝ ցանկացած անձ, ով, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

c) «Վրաստանի քաղաքացի» նշանակում է՝ ցանկացած անձ, ով, Վրաստանի օրենսդրության համաձայն, ունի Վրաստանի քաղաքացիություն.

d) «Երրորդ երկրի քաղաքացի» նշանակում է՝ ցանկացած անձ, ով ունի որևէ այլ երկրի քաղաքացիություն՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կամ Վրաստանի.

e) «քաղաքացիություն չունեցող անձ» նշանակում է՝ ցանկացած անձ, ով որևէ պետության օրենսդրությամբ այդ պետության քաղաքացի չէ.

f) «կացության թույլտվություն» նշանակում է՝ Պայմանավորվող կողմերի կողմից տրված՝ իր տարածքում բնակվելու թույլտվություն:

Սա չի ներառում ապաստանի դիմումի կամ բնակության թույլտվության դիմումի ուսումնասիրման ընթացքում իր տարածքում մնալու ժամանակավոր թույլտվությունները.

g) «վիզա» նշանակում է՝ Պայմանավորվող կողմերի կողմից տրված պայմանական թույլտվություն կամ ընդունված որոշում, որը պահանջվում է իր

տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ տարածքով անցնելու համար:

Սա չի ներառում օդանավակայանով տարանցման վիզան.

h) «Հայցող պետություն» նշանակում է՝ այն Պայմանավորվող կողմը, որը ներկայացնում է հետընդունման (ռեադմիսիայի) դիմում՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն, կամ տարանցման դիմում՝ 14-րդ հոդվածի համաձայն.

i) «Հայցվող պետություն» նշանակում է՝ այն Պայմանավորվող կողմը, որին հասցեագրված է հետընդունման (ռեադմիսիայի) դիմումը՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն, կամ տարանցման դիմումը՝ 14-րդ հոդվածի համաձայն.

j) «իրավասու մարմին» նշանակում է՝ Պայմանավորվող կողմի ցանկացած պետական մարմին, որին վերապահված է սույն Համաձայնագրի կիրարկումը.

k) «տարանցում» նշանակում է՝ երրորդ երկրի քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայցող պետության տարածքից նպատակակետ երկիր ճամփորդելիս Հայցվող պետության տարածքով անցնելը.

l) «անձնական տվյալներ» նշանակում է՝ սույն Համաձայնագրի նպատակներով ցանկացած տվյալ, որը թույլ է տալիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն հաստատելու նույնականացված կամ նույնականացման ենթակա անձի ինքնությունը:

Հոդված 2

Հիմնարար սկզբունքները

1. Հայցվող պետությունը մասնավորապես ապահովում է իր տարածք հետընդունված (ռեադմիսիայի ենթարկված) անձանց իրավունքների պաշտպանությունը՝ սույն Համաձայնագրին և միջազգային այն փաստաթղթերով ստանձնած իր պարտավորություններին համապատասխան, որոնց կողմ են Պայմանավորվող կողմերը:

2. Հայցող պետությունը պետք է նախապատվություն տա կամավոր, այլ ոչ հարկադիր վերադարձին, եթե պատճառներ չկան ենթադրելու, որ դա կխոչընդոտի անձի վերադարձը Հայցվող պետություն:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերի պետությունների

քաղաքացիների հետընդունումը

1. Հայցվող պետությունը, Հայցող պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների, բացառությամբ նրանց, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրով, հետ է ընդունում բոլոր այն անձանց, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայցող պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու գործող պայմանները՝ պայմանով, որ ապացուցված է կամ ներկայացված առերևույթ (*prima facie*) փաստարկների հիման վրա կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, որ նրանք Հայցվող պետության քաղաքացիներ են:

2. Հայցվող պետությունը հետ է ընդունում նաև՝

- սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց անչափահաս չամուսնացած երեխաներին՝ անկախ նրանց ծննդյան վայրից կամ քաղաքացիությունից՝ բացառությամբ այն դեպքերի, եթե նրանք ունեն Հայցող պետությունում բնակության անկախ իրավունք.

- սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց ամուսիններին, որոնք ունեն այլ երկրի քաղաքացիություն կամ քաղաքացիություն չունեցող անձ են և ունեն վավեր ճամփորդական փաստաթուղթ՝ պայմանով, որ նրանք ունենան Հայցվող պետության տարածք մուտք գործելու և այնտեղ գտնվելու իրավունք կամ ունեն այդ իրավունքը հետագայում ստանալու հիմք՝ բացառությամբ այն դեպքերի, եթե նրանք ունեն Հայցող պետությունում բնակության անկախ իրավունք:

3. Հայցվող պետությունը հետ է ընդունում նաև Հայցող պետությունում անօրինականորեն գտնվող կամ բնակվող այն անձանց, ովքեր Հայցող պետության տարածք մուտք գործելուց հետո, Հայցվող պետության ներպետական օրենսդրության համաձայն, հրաժարվել են այդ երկրի քաղաքացիությունից՝ բացառությամբ այն դեպքերի, եթե այդ անձանց Հայցող պետությունն առնվազն խոստացել է հպատակագրում (նատուրալիզացիա):

4. Հայցվող պետության կողմից հետընդունման դիմումին դրական

պատասխան տրվելու դեպքում Հայցվող պետության իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը, անկախ հետ ընդունվող անձի ցանկությունից, ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հետ ընդունվող անձի վերադարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթ՝ 90 օր վավերականության ժամկետով: Եթե Հայցվող պետությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի տրամադրում ճամփորդական փաստաթուղթը, ապա համարվում է, որ վերջինս ընդունում է երկրից արտաքսման նպատակով տրվող՝ Հայցող պետության օրինակելի ձևի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը:

5. Եթե իրավական կամ փաստացի պատճառներով համապատասխան անձը չի կարող տեղափոխվել նախապես տրամադրված ճամփորդական փաստաթղթի վավերականության ընթացքում, ապա Հայցվող պետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է նույն վավերականության ժամկետով նոր ճամփորդական փաստաթուղթ: Եթե Հայցվող պետությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի տրամադրում նոր ճամփորդական փաստաթուղթ, ապա համարվում է, որ վերջինս ընդունում է արտաքսման նպատակով տրվող՝ Հայցող պետության օրինակելի ձևի ճամփորդական փաստաթղթի օգտագործումը:

6. Սույն Համաձայնագիրը ստորագրելուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում, Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով փոխանակում են երկրից մեկնելու համար պահանջվող օրինակելի ձևի ճամփորդական փաստաթղթերի նմուշները:

Հոդված 4

Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունումը

1. Հայցվող պետությունը Հայցող պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների, բացառությամբ այն պահանջների, որոնք

նախատեսված են սույն Համաձայնագրով, հետ է ընդունում երրորդ երկրի քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող այն անձանց, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայցող պետության տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու գործող պայմանները՝ պայմանով, որ ապացուցված է կամ տրամադրված առերևույթ (*prima facie*) ապացույցների հիման վրա կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, որ այդպիսի անձինք՝

a) հետընդունման դիմումը ներկայացնելու պահին ունեն Հայցվող պետության կողմից տրված վավեր վիզա կամ կացության թույլտվություն, կամ

b) Հայցվող պետության տարածքում գտնվելուց կամ այդ տարածքով տարանցելուց հետո անօրինական կերպով և ուղղակիորեն մուտք են գործել Հայցող պետության տարածք:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հետընդունման պարտավորությունը չի գործում, եթե՝

a) երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը գտնվել է միայն օդային տարանցման գոտում՝ Հայցվող պետության միջազգային օդանավակայանում,

b) երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն օգտվել է Հայցող պետության տարածք առանց վիզայի մուտքի ռեժիմից,

c) Հայցող պետությունն իր տարածք մուտք գործելուց առաջ կամ հետո երրորդ երկրի քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին տրամադրել է վիզա կամ կացության թույլտվություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անձն ունի Հայցվող պետության կողմից տրված՝ առավել երկար վավերականության ժամկետով վիզա կամ բնակության թույլտվություն,

d) Հայցվող պետությունն արտաքսել է երրորդ երկրի քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին իր ծագման երկիր կամ երրորդ երկիր :

3. Հայցվող պետության կողմից հետընդունման դիմումին դրական արձագանքելու դեպքում Հայցող պետությունը վերադարձի համար պահանջվող օրինակելի ձևի ճամփորդական փաստաթուղթ է տրամադրում այն անձին, ում հետընդունման մասով դրական արձագանք է տրվել:

Հոդված 5

Սկզբունքները

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված պայմանների՝ սույն Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսված պարտավորություններից որևէ մեկի հիման վրա իրականացվող՝ հետընդունման ենթակա անձի տեղափոխման համար պահանջվում է հետընդունման դիմումի ներկայացում Հայցվող պետության իրավասու մարմին:

2. Եթե հետընդունման ենթակա անձը Հայցվող պետության տարածքում ունի վավեր ճամփորդական փաստաթուղթ, հետընդունման դիմումի ներկայացում չի պահանջվում:

Հոդված 6

Հետընդունման դիմումը

1. Հետընդունման դիմումը հնարավորության սահմաններում պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

a) հետընդունման ենթակա անձի տվյալները (օրինակ՝ անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը և, եթե հնարավոր է, ծննդավայրն ու բնակության վերջին վայրը) և, եթե կիրառելի է, անչափահաս չամուսնացած երեխաների և/կամ ամուսինների տվյալները.

b) սեփական քաղաքացիների դեպքում՝ նշումներ, համապատասխանաբար, 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված՝ քաղաքացիության մասով ապացույցների կամ առերևույթ (*prima facie*) փաստարկների մասին.

c) երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ նշումներ, համապատասխանաբար, 3-րդ և 4-րդ հավելվածներով սահմանված՝ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանների մասով ապացույցների կամ առերևույթ (*prima facie*) փաստարկների մասին.

d) հետ ընդունվող անձի լուսանկարը.

ե) հետ ընդունվող անձի մատնահետքերը:

2. Հետընդունման դիմումը հնարավորության սահմաններում պարունակում է նաև հետևյալ տեղեկությունները.

ա) հայտարարություն այն մասին, որ տեղափոխման ենթակա անձն ունի օգնության կամ խնամքի կարիք՝ պայմանով, որ տվյալ անձը հստակ կերպով տվել է իր համաձայնությունը այդ հայտարարությանը.

բ) տվյալ անձի առողջությանն առնչվող՝ պաշտպանության, անվտանգության միջոց կամ այլ տեղեկատվություն, որը կարող է անհրաժեշտ լինել կոնկրետ տվյալ տեղափոխման պարագայում:

3. Հետընդունման դիմումի համար կիրառելի ընդհանուր ձևը ներկայացված է սույն Համաձայնագրին կից՝ որպես 5-րդ հավելված:

4. Հետընդունման և տարանցման դիմումները, դրանց պատասխանները և այլ վերաբերելի հաղորդագրությունները կարող են ներկայացվել հաղորդակցության էլեկտրոնային միջոցներով, այդ թվում՝ ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ՌՀԿԷՀ) միջոցով:

Հոդված 7

Քաղաքացիության մասով ապացուցման միջոցները

1. Սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվող՝ քաղաքացիության մասով ապացույցը կարող է ներկայացվել մասնավորապես 1-ին հավելվածում թվարկված փաստաթղթերի միջոցով, եթե անգամ դրանց վավերականության ժամկետն ավարտվել է ոչ ավել, քան 6 ամիս առաջ: Քաղաքացիության մասով ապացույցը չի կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով:

2. Քաղաքացիության մասով առերևույթ (prima facie) փաստարկները կարող են տրամադրվել մասնավորապես 2-րդ հավելվածում թվարկված փաստաթղթերի միջոցով, եթե անգամ դրանց վավերականության ժամկետն ավարտվել է: Եթե ներկայացվում են այդպիսի փաստաթղթեր, ապա Պայմանավորվող կողմերը քաղաքացիությունը համարում են հաստատված, եթե

հակառակը չեն կարող ապացուցել: Քաղաքացիության մասով առերևույթ (prima facie) փաստարկները չեն կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով:

3. Եթե 1-ին և 2-րդ հավելվածներում թվարկված փաստաթղթերից որևէ մեկը չի կարող ներկայացվել, կամ եթե դրանք բավարար չեն, ապա համապատասխան Հայցվող պետության իրավասու մարմինը կամ իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները հետընդունման դիմումում ներառված՝ Հայցող պետության կողմից ներկայացված՝ հարցազրույց անցկացնելու խնդրանքի հիման վրա հետընդունման ենթակա անձի հետ առանց անհարկի ձգձգման, խնդրանքը ներկայացնելու օրվանից հետո ամենաուշը հինգ աշխատանքային օրվա ընթացքում անցկացնում են հարցազրույց՝ վերջինիս քաղաքացիության փաստը հաստատելու համար:

- Հարցազրույցն անցկացվում է իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության վարչական շենքում,

- Պայմանավորվող կողմերը կարող են համաձայնության գալ հարցազրույցն այլ վայրում անցկացնելու շուրջ,

- եթե հարցազրույցն անցկացվում է իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության վարչական շենքից դուրս, ապա ճամփորդության և կեցության հետ կապված ծախսերը կրում է Հայցող պետությունը,

- հարցազրույցի ժամանակ Հայցող պետությունն ապահովում է հարցազրույցն անցկացնող դիվանագիտական ծառայության աշխատակցի անվտանգությունը:

4. Սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հետընդունման դիմումին պատասխանելու ժամկետի հաշվարկը սկսվում է հարցազրույցն անցկացնելու օրվանից:

Հոդված 8

Երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց մասով ապացուցման միջոցները

1. Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանների վերաբերյալ ապացույցները մասնավորապես ներկայացվում են 3-րդ հավելվածում թվարկված ապացուցման միջոցներով. դրանք չեն կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով:

2. Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պայմանների վերաբերյալ առերևույթ (prima facie) փաստարկները մասնավորապես ներկայացվում են 4-րդ հավելվածում թվարկված ապացուցման միջոցներով. դրանք չեն կարող ներկայացվել կեղծ փաստաթղթերի միջոցով: Եթե այդպիսի առերևույթ (prima facie) փաստարկ է ներկայացվում, Պայմանավորվող կողմերը համարում են պայմանները հաստատված, եթե հակառակը չեն կարող ապացուցել:

3. Մուտք գործելու, գտնվելու կամ բնակության անօրինական բնույթը հաստատվում է համապատասխան անձի ճամփորդական փաստաթղթերի միջոցով, որոնցում անհրաժեշտ Հայցող պետության տարածքում վավեր վիզան կամ բնակության անհրաժեշտ թույլտվությունը բացակայում է: Հայցող պետության հայտարարությունն այն մասին, որ տվյալ անձը չունի անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթեր, վիզա կամ կացության թույլտվություն, նմանապես համարվում է մուտքի, գտնվելու կամ կացության մասով անօրինականության փաստի վերաբերյալ առերևույթ (prima facie) փաստարկ:

Հոդված 9

Ժամկետները

1. Հետընդունման դիմումը ներկայացվում է Հայցվող պետության իրավասու մարմնին առավելագույնը 6 ամսվա ընթացքում այն պահից հետո, երբ Հայցող պետության իրավասու մարմինը տեղեկանում է, որ երրորդ երկրի

քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի բավարարում կամ այլևս չի բավարարում մուտքի, գտնվելու կամ բնակության համար գործող պայմանները: Եթե դիմումը սահմանված ժամկետում ներկայացնելու համար առկա են իրավական կամ փաստացի խոչընդոտներ, ապա Հայցող պետության դիմումի հիման վրա այդ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց մինչև այն պահը, երբ խոչընդոտները դադարեն գոյություն ունենալ:

2. Հետընդունման դիմումին անհրաժեշտ է պատասխանել գրավոր՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Ժամկետը հաշվարկվում է հետընդունման դիմումի ստացման օրվանից:

Եթե այդ ժամանակահատվածում պատասխան չի ստացվում, ապա համարվում է, որ տեղափոխման մասին համաձայնություն է ձեռք բերվել:

3. Հետընդունման դիմումը մերժելու պատճառները ներկայացվում են գրավոր:

4. Համաձայնություն տալուց հետո կամ, անհրաժեշտության դեպքում, սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետների ավարտից հետո՝ 90 (իննսուն) օրացուցային օրվա ընթացքում, իրականացվում է համապատասխան անձի տեղափոխումը: Հայցող պետության դիմումի հիման վրա ժամկետները կարող են երկարաձգվել իրավական կամ փաստացի խոչընդոտների վերացման համար անհրաժեշտ ժամկետով:

5. Հաղորդակցության էլեկտրոնային եղանակները, այդ թվում՝ ՌՀԿԷՀ-ը, կարող են օգտագործվել հետընդունման դիմումի ստացումը հաստատելու և հետընդունման դիմումին պատասխանելու համար:

Հոդված 10

Լրացուցիչ փաստաթղթերը

1. Եթե Հայցող պետությունը համարում է, որ առկա են սույն Համաձայնագրի 1-4-րդ հավելվածներում չթվարկված լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր, որոնք կարող են էական նշանակություն ունենալ հետընդունման ենթակա անձի քաղաքացիությունը հաստատելու կամ երրորդ

երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման համար պայմաններ ստեղծելու համար, ապա նման տեղեկությունները կամ փաստաթղթերը կարող են հետընդունման դիմումի հետ միասին ներկայացվել Հայցվող պետությանը:

2. Հայցվող պետությունն է որոշում, թե արդյոք սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը պետք է հաշվի առնվեն հետընդունման դիմումը քննարկելիս, թե՛ ոչ:

Հոդված 11

Տեղափոխման ձևերը և փոխադրման ռեժիմները

1. Մինչև անձին վերադարձնելը Հայցող պետության իրավասու մարմիններն առնվազն երեք աշխատանքային օր առաջ Հայցվող պետության իրավասու մարմիններին նախապես տեղափոխման վերաբերյալ գրավոր ծանուցում են ուղարկում (հավելված 7), որը պարունակում է տեղափոխման ամսաթվի, պետական սահմանի անցման կետի, հնարավոր ուղեկցողների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև տեղափոխմանը վերաբերող այլ տեղեկություններ:

2. Տեղափոխումը կատարվում է հիմնականում ցամաքային և օդային փոխադրման եղանակներով: Ցամաքային և օդային ուղիներով վերադարձը չի սահմանափակվում Պայմանավորվող կողմերի ազգային փոխադրողների օգտագործմամբ: Վերադարձը կարող է իրականացվել կանոնավոր կամ չարտերային չվերթով: Ուղեկցվող վերադարձի դեպքում ուղեկցումը չի սահմանափակվում Հայցվող պետության լիազորված անձանցով՝ պայմանով, որ նրանք Պայմանավորվող կողմերի լիազորված անձինք են:

Հոդված 12

Սխալմամբ իրականացված հետընդունումը

1. Հայցող պետությունը հետ է ընդունում Հայցվող պետության կողմից հետ ընդունված ցանկացած անձի, եթե անձի տեղափոխումից հետո՝ վեց ամսվա ընթացքում, իսկ երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող

անձանց տեղափոխումից հետո՝ 12 ամսվա ընթացքում հաստատվում է, որ սույն Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված պահանջները չեն կատարվել:

2. Նման դեպքերում սույն Համաձայնագրի ընթացակարգային դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), և տրամադրվում է հետ ընդունվող անձի իրական ինքնությանը և քաղաքացիությանը վերաբերող՝ հասանելի ողջ տեղեկատվությունը:

Հոդված 13

Տարանցման սկզբունքները

1. Պայմանավորվող կողմերը պետք է սահմանափակեն երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը՝ այն դեպքերում, երբ այդ անձինք չեն կարող ուղղակիորեն վերադարձվել նպատակակետ հանդիսացող պետություն:

2. Հայցվող պետությունը թույլատրում է երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումը, եթե հետագա ճամփորդությունը հնարավոր այլ տարանցման պետություններով և նպատակակետ հանդիսացող պետության կողմից հետընդունումն ապահովված են:

3. Հայցվող պետությունը կարող է տարանցումը մերժել հետևյալ դեպքերում.

a) եթե իրական վտանգ կա, որ երրորդ երկրի քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը նպատակակետ հանդիսացող պետությունում կամ տարանցման այլ պետությունում կարող է ենթարկվել խոշտանգման կամ այլ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մահապատժի կամ կհետապնդվի ռասայական, կրոնական, ազգային, որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների շարժառիթներով, կամ

b) եթե երրորդ պետության քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը նպատակակետ հանդիսացող պետությունում կամ տարանցման որևէ այլ պետությունում կենթարկվի քրեական պատժամիջոցների, կամ

c) հանրային առողջության, ազգային անվտանգության, հասարակական կարգի հիմքերով կամ Հայցվող պետության այլ ազգային շահերից ելնելով:

4. Հայցվող պետությունը կարող է չեղյալ հայտարարել տրված ցանկացած թույլտվություն, եթե հետագայում առաջանան կամ երևան գան սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքները, որոնք խոչընդոտում են տարանցման իրականացումը, կամ եթե հետագա ճամփորդությունը հնարավոր տարանցման երկրներով կամ հետընդունումը նպատակակետ հանդիսացող պետության կողմից այլևս ապահովված չեն: Այդ դեպքում Հայցող պետությունը հետ է վերադարձնում երրորդ պետության քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին անհրաժեշտ կերպով և առանց ուշացման:

Հոդված 14

Տարանցման ընթացակարգը

1. Տարանցման գործողությունների վերաբերյալ դիմումը և դրա պատասխանը Հայցվող պետության իրավասու մարմին է ներկայացվում հաղորդակցության էլեկտրոնային միջոցներով, այդ թվում՝ ՌՀԿԷԿ-ի, և այն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

a) տարանցման տեսակը (օդային կամ ցամաքային), տարանցման այլ հնարավոր պետություն և նախատեսված վերջնական նպատակակետ հանդիսացող պետություն.

b) համապատասխան անձի տվյալները (օրինակ՝ անունը, ազգանունը, նախկին ազգանունը, այլ անուններ, որոնք օգտագործվում են (որով հայտնի է), կամ կեղծանունները, ծննդյան ամսաթիվը, սեռը, հնարավորության դեպքում՝ ծննդավայրը, քաղաքացիությունը, լեզուն, ճամփորդական փաստաթղթի տեսակն ու համարը).

c) տեղեկություններ՝ նախատեսված սահմանային անցակետի, տեղափոխման ժամի և հնարավոր ուղեկցողների մասին.

d) հայտարարություն այն մասին, որ, ըստ Հայցող պետության, սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պայմանները

բավարարվել են, և որ սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված մերժման որևէ հիմք հայտնի չէ:

Տարանցման դիմումի ընդհանուր ձևը ներկայացված է սույն Համաձայնագրին կից՝ որպես 6-րդ հավելված:

2. Հայցվող պետությունը դիմումը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնում է Հայցող պետությանը դիմումի ընդունման մասին՝ հաստատելով ընդունման սահմանային անցակետը և նախատեսված ժամը, կամ տեղեկացնում է ընդունումը մերժելու և մերժման հիմքերի մասին: Տասը աշխատանքային օրվա ընթացքում պատասխան չստանալու դեպքում տարանցումը համարվում է համաձայնեցված:

3. Եթե տարանցումն իրականացվում է օդային ճանապարհով, ապա հետընդունման ենթակա անձը և նրա հնարավոր ուղեկցողներն ազատվում են օդանավակայանով տարանցման վիզա ձեռք բերելու պահանջից:

4. Հայցվող պետության իրավասու մարմինները, փոխադարձ խորհրդակցությունների համաձայն, աջակցում են տարանցման գործողությունների իրականացմանը, մասնավորապես, համապատասխան անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողության, ինչպես նաև այդ նպատակով անհրաժեշտ հարմարությունների ապահովման միջոցով:

5. Համապատասխան անձանց տարանցումն իրականացվում է տարանցման վերաբերյալ համաձայնությունը ստանալուց հետո՝ 30 (երեսուն) օրվա ընթացքում, եթե այլ համաձայնություն ձեռք չի բերվել:

Հոդված 15

Հետընդունման կամ տարանցման ենթակա անձի ուղեկցումը

1. Հայցող պետությունը Հայցվող պետությանը գրավոր տեղեկացնում է այն անձանց վերադարձման մասին, որոնց հետընդունման և տարանցման համար պահանջվում են ուղեկցողներ: Հայցող պետությունը ուղեկցող անձանց վերաբերյալ տրամադրում է հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, կոչումը, պաշտոնը, ինչպես նաև ծառայողական վկայականը, անձնագրերի տեսակները,

դրանց համարները և տրման ամսաթվերը, ուղեկցման առաքելության հրամանը:

2. Ուղեկցողը պատասխանատու է տեղափոխման ենթակա անձին ուղեկցելու, նրան նպատակակետ հանդիսացող պետության հիմնական իրավասու մարմնի ներկայացուցչին հանձնելու, ինչպես նաև տեղափոխման ենթակա անձի վավեր ճամփորդական և մյուս անհրաժեշտ փաստաթղթերը, անձնական տվյալները իր մոտ ունենալու և նպատակակետ հանդիսացող պետության իրավասու ներկայացուցչին այդ տվյալները փոխանցելու համար: Մինչև անձի տեղափոխման գործընթացի ավարտը ուղեկցողը չի կարող հեռանալ տեղափոխման պայմանավորված վայրից:

3. Ուղեկցողը պարտավոր է գործել Հայցվող պետության օրենսդրության համապատասխան: Հետընդունման գործընթացի ժամանակ ուղեկցողի իրավունքները սահմանափակվում են ինքնապաշտպանությամբ: Ուղեկցողներին օգնելու կամ անհրաժեշտ գործողություններ իրականացնելու համար լիազորված՝ Հայցվող կողմի պաշտոնատար անձանց բացակայության դեպքում ուղեկցողներն անմիջական և լուրջ վտանգների դեպքերում կարող են ձեռնարկել ողջամիտ և համաչափ միջոցներ՝ կանխելու համար տեղափոխման ենթակա անձի փախուստը, նրա կողմից իրեն կամ երրորդ անձանց վնասելը, ինչպես նաև գույքային վնաս պատճառելը:

4. Ուղեկցողներն իրենց պարտականություններն իրականացնում են անգն, կրում են քաղաքացիական հագուստ և իրենց մոտ ունեն վավեր անձնագիր, ծառայողական վկայական, առաքելության իրականացման հրաման և հետընդունման կամ տարանցման թույլտվություն:

Հոդված 16

Ծախսերը

1. Մինչև Հայցվող պետության սահմանը կամ նպատակակետ հանդիսացող պետության սահմանն իրականացվող հետընդունման և տարանցման գործողությունների հետ կապված տրանսպորտային և վարչական բոլոր ծախսերը կրում է Հայցող պետությունը:

2. Հայցող պետությունը հաշիվ-ապրանքագիրն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, վճարում է կատարված ծախսերի դիմաց՝ գումարը փոխանցելով Հայցվող պետության իրավասու մարմնի բանկային հաշվին:

Հոդված 17

Տվյալների պաշտպանությունը

1. Անձնական տվյալները հաղորդվում են միայն այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից սույն Համաձայնագրի կիրարկման համար: Անձնական տվյալների մշակումը և պաշտպանությունն իրականացվում են Պայմանավորվող կողմերի օրենսդրության համապատասխան: Սույն Համաձայնագրի շրջանակներում հաղորդված անձնական տվյալների պահպանման ժամկետը չի կարող գերազանցել հաղորդվող տվյալների հատուկ նպատակի իրականացման համար անհրաժեշտ ժամկետը: Բացի այդ՝ սույն Համաձայնագրի շրջանակներում հաղորդվող անձնական տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ նվազագույն պահանջներին.

a) տվյալների մշակումը պետք է կատարվի անաչառ և օրինական.

b) անձնական տվյալները պետք է հավաքվեն սույն Համաձայնագրի՝ սահմանված, հստակ և օրինական կարգով կիրարկման նպատակով: Անձնական տվյալները չեն կարող օգտագործվել այլ նպատակներով, քան այն նպատակներն են, որոնց համար դրանք փոխանցել են, և առանց տվյալները փոխանցող կողմի նախնական համաձայնության.

c) անձնական տվյալները կարող են հաղորդվել միայն սույն Համաձայնագրի իրավասու մարմիններին: Դրանք այլ մարմինների փոխանցելու համար պահանջվում է դրանք հաղորդած մարմինների նախնական համաձայնությունը: Ստացված տվյալները գաղտնի են.

d) անձնական տվյալները կարող են մշակվել միայն սույն Համաձայնագրի համար անհրաժեշտ նպատակների շրջանակներում և դրանց համաչափ: Մասնավորապես, հաղորդվող անձնական տվյալները կարող են վերաբերել բացառապես հետևյալին.

- տեղափոխման ենթակա անձի տվյալներ (օրինակ՝ անունը, ազգանունը, նախկին անունները, այլ անուններ, որոնք օգտագործվում են (որով վերջինս հայտնի է), կեղծանունները, սեռը, ընտանեկան դրությունը, ծննդյան ամսաթիվը և վայրը, ներկա և նախկին որևէ քաղաքացիություն), այդ թվում՝ հատուկ կատեգորիայի տվյալներ,

- կանգառի վայրեր ու երթուղիներ,

- այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են փոխադրման ենթակա անձին նույնականացնելու կամ սույն Համաձայնագրի համաձայն հետընդունման պահանջներն ուսումնասիրելու համար.

e) տվյալները հաղորդող մարմիններն ապահովում են, որ անձնական տվյալները լինեն ճշգրիտ և թարմացված: Եթե պարզվում է, որ հաղորդված տվյալները ճշգրիտ չեն, ապա տվյալները հաղորդող մարմինը այդ մասին ծանուցում է տվյալները ստացող մարմնին.

f) եթե հաղորդվող տվյալները ճշգրիտ կամ թարմացված չեն, կամ այդպիսի տվյալների փոխանցումը թույլատրված չի եղել, ապա ստացող մարմինն ուղղում և թարմացնում է դրանք կամ ջնջում է այդ անձնական տվյալները՝ այդ մասին անմիջապես ծանուցելով տվյալները հաղորդած մարմնին.

g) հաղորդված անձնական տվյալների մշակման հիմքերի և/կամ դրանք պահելու օրինական նպատակի դադարման դեպքում տվյալներն ստացող մարմինը դրանք ջնջում է: Տվյալներն ստացող մարմինը ծանուցվում է անձնական տվյալները ջնջելու մասին.

h) տվյալները հաղորդող մարմնի դիմումի հիման վրա տվյալներ ստացող մարմինը ծանուցում է անձնական տվյալների օգտագործման արդյունքների մասին.

i) տվյալներ ստացող մարմինն օգտագործում է բոլոր համապատասխան կազմակերպչական և տեխնիկական միջոցները՝ ապահովելու համար անձնական տվյալների անվտանգությունը՝ երրորդ անձանց կողմից դրանց նկատմամբ հասանելիությունը, փոխարինումը, ջնջումը, ուղղումը կամ բացահայտումը բացառելու համար: Տվյալներ ստացող մարմինը ձեռնարկված անվտանգության միջոցների, ինչպես նաև տվյալները ստանալու և դրանք երրորդ կողմի

փոխանցելու փաստերի վերաբերյալ կատարում է գրանցումներ.

յ) տվյալները հաղորդող և ստացող մարմինները պարտավոր են էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով մշակված տվյալների առնչությամբ իրականացրած յուրաքանչյուր գործողության մասին կատարել գրանցումներ: Ինչ վերաբերում է ոչ էլեկտրոնային միջոցներով մշակված տվյալներին, ապա գրանցումները կատարվում են տվյալների բացահայտման և/կամ դրանցում կատարված փոփոխությունների հետ կապված գործողությունների վերաբերյալ: Գրանցումներում նշվում է տվյալների հաղորդման նպատակի, տվյալների բովանդակության և կատեգորիայի, տեղեկությունների հաղորդման գործընթացում ներգրավված մարմինների և տվյալների մասով կատարված աշխատանքների (այդ թվում՝ ոչնչացման) նպատակի մասին.

կ) տվյալներ ստացող մարմինը պարբերաբար վերանայում է հաղորդված տվյալները, և եթե անձնական տվյալների մշակման հիմքերը և/կամ դրանք պահելու օրինական նպատակը դադարել են, ապա դրանք ջնջում է.

լ) սույն Համաձայնագրի 17-րդ հոդվածի 1-ին կետի «c» ենթակետի համաձայն՝ եթե հաղորդված տեղեկությունները պարունակում են անձնական տվյալներ, և եթե այդ տեղեկությունները հետագայում փոխանցվելու են մեկ այլ մարմնի կամ օգտագործվելու են սույն Համաձայնագրով նախատեսված նպատակներից տարբեր այլ նպատակներով, ապա դրանց մասով պետք է ապահովվեն սույն Համաձայնագրով երաշխավորված՝ տվյալների պաշտպանության չափանիշներ.

մ) սույն հոդվածով նախատեսված պարտավորությունների կատարման անհնարինության դեպքում Պայմանավորվող կողմերն այդ մասին անմիջապես ծանուցում են միմյանց:

Հոդված 18

Առնչությունն այլ միջազգային պարտավորություններին

Սույն Համաձայնագիրը չի ազդում Պայմանավորվող կողմերի իրավունքների և պարտականությունների վրա, որոնք սահմանված են միջազգային այլ պայմանագրերով, որոնց մասնակից են Հայաստանի Հանրապետությունը և

Վրաստանը:

Հոդված 19

Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեն

1. Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման առնչությամբ միմյանց տրամադրում են փոխադարձ օգնություն: Այդ նպատակով նրանք ստեղծում են հետընդունման հարցերով համատեղ կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե), որը մասնավորապես ունենալու է հետևյալ խնդիրները.

- a) մշտադիտարկել սույն Համաձայնագրի կիրարկումը.
- b) լուծել սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանումից կամ կիրառումից բխող խնդիրները.
- c) որոշում կայացնել այն միջոցառումների մեկնաբանման վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրի միատեսակ կիրառության համար.
- d) առաջարկություններ ներկայացնել սույն Համաձայնագրում և դրա հավելվածներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

2. Կոմիտեի որոշումները պարտադիր են Պայմանավորվող կողմերի համար:

- 3. Կոմիտեն կազմված է Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչներից:
- 4. Կոմիտեի նիստերն անցկացվում են անհրաժեշտության դեպքում՝ Պայմանավորվող կողմերից մեկի խնդրանքով:
- 5. Կոմիտեն ընդունում է իր աշխատակարգային կանոնները: Այն վեճերը, որոնք չեն կարող կարգավորվել Կոմիտեի կողմից, լուծվում են Պայմանավորվող կողմերի միջև խորհրդակցությունների և/կամ բանակցությունների միջոցով:

Հոդված 20

Կիրարկման հետ կապված դրույթները

1. Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագիրը ստորագրելուց հետո՝ 60 (վաթսուն) օրացուցային օրվա ընթացքում, դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են Համաձայնագրի կիրարկման համար պատասխանատու

իրավասու մարմինների, նրանց կոնտակտային տվյալների և սահմանային անցակետերի մասին:

2. Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց անմիջապես տեղեկացնում են սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավասու մարմինների, նրանց կոնտակտային տվյալների և սահմանային անցակետերի ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 21

Հաղորդակցության լեզուն

Սույն Համաձայնագրի կիրարկման շրջանակներում Պայմանավորվող կողմերի միջև տեղի ունեցող հաղորդակցության լեզուն անգլերենն է:

Հոդված 22

Ժամանակավոր կասեցումը

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ազգային անվտանգության, հասարակական կարգի կամ հանրային առողջության պահպանման հետ կապված պատճառներով կարող է մյուս Պայմանավորվող կողմին դիվանագիտական ուղիներով ծանուցելու միջոցով և 19-րդ հոդվածում նշված Կոմիտեի նախնական խորհրդակցությունից հետո ժամանակավորապես ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել սույն Համաձայնագրի կիրարկումը: Կասեցումն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումն ստանալու օրվան հաջորդող երկրորդ օրը: Կասեցման պատճառները վերանալու դեպքում սույն Համաձայնագրի կիրարկումը կասեցրած Պայմանավորվող կողմն այդ մասին դիվանագիտական ուղիներով անմիջապես տեղեկացնում է մյուս Պայմանավորվող կողմին:

Հոդված 23

Հավելվածները

Սույն Համաձայնագրի 1-7-րդ հավելվածները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 24

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվան հաջորդող ամսվա առաջին օրը, որով Պայմանավորվող կողմերը միմյանց տեղեկացնում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Պայմանավորվող կողմին այդ մասին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելով: Այդ դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է Համաձայնագրի գործողության դադարեցման մասին մյուս Պայմանավորվող կողմի ծանուցումը ստանալու օրվանից 6 (վեց) ամիս հետո:


3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում և դրա հավելվածներում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին փաստաթղթով և ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով: Կազմված փաստաթուղթը կազմում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Կատարված է Թբիլիսի քաղաքում, 2025 թվականի հուլիսի 21-ին, երկու
բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր
տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման հետ կապված տարաձայնությունների
դեպքում, գերակայում է անգլերեն տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



ՎՐԱՍՏԱՆԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



**Փաստաթղթերի ընդհանուր ցանկը, որոնց ներկայացումը համարվում է
քաղաքացիության մասով ապացույց**

(3-րդ հոդվածի 1-ին կետ և 7-րդ հոդվածի 1-ին կետ)

- Ցանկացած տեսակի անձնագիր (ազգային անձնագրեր, դիվանագիտական անձնագրեր, ծառայողական անձնագրեր, ներառյալ երեխաների անձնագրերը)։
- պետության կողմից տրված նույնականացման քարտեր (ներառյալ ժամանակավոր նույնականացման քարտերը և պայմանական տրված նույնականացման քարտերը)։
- նույնականացման քարտեր և այլ պաշտոնական փաստաթղթեր, որոնք պարունակում են անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկություն կամ հստակ նշում են քաղաքացիությունը։

Փաստաթղթերի ընդհանուր ցանկը, որոնց ներկայացումը համարվում է քաղաքացիության մասով առերևույթ (prima facie) փաստարկ (3-րդ հոդվածի 1-ին կետ և 7-րդ հոդվածի 2-րդ կետ)

- 1-ին հավելվածում թվարկված փաստաթղթեր, որոնց վավերականության ժամկետն ավարտվել է ավելի, քան 6 ամիս առաջ.
- 1-ին հավելվածում թվարկված փաստաթղթերից որևէ մեկի լուսապատճեն.
- քաղաքացիության հավաստագրեր և այլ պաշտոնական փաստաթղթեր, որոնք նշում կամ հստակ մատնանշում են քաղաքացիությունը.
- վարորդական իրավունքի վկայականներ կամ դրանց լուսապատճեններ.
- ծննդյան վկայականներ կամ դրանց լուսապատճեններ.
- ընկերության նույնականացման քարտեր կամ դրանց լուսապատճեններ.
- ծառայողական գրքույկ և զինվորական գրքույկ.
- նավաստիների հաշվառման քարտեր, նավապետերի ծառայողական քարտեր և նավաստիների նույնականացման քարտեր.
- վկաների հայտարարություններ.
- համապատասխան անձի գրավոր հայտարարությունը և այն լեզուն, որով նա խոսում է, այդ թվում՝ պաշտոնական թեստի արդյունքների հիման վրա.
- ցանկացած այլ փաստաթուղթ, որը կարող է օգնել հաստատել անձի քաղաքացիությունը.
- ինքնության հաստատում «Մուտք-ելք և գրանցում» տեղեկատվական որոնման ավտոմատացված համակարգում (IAMAS) կատարված որոնման արդյունքում.
- ինքնության հաստատում միգրացիայի սահմանային կառավարման և հաշվետվությունների համակարգում (BMARS) կատարված որոնման արդյունքում:

**Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց
հետընդունման համար պայմանների մասով ապացույց համարվող
փաստաթղթերի ընդհանուր ցանկ
(4-րդ հոդվածի 1-ին կետ և 8-րդ հոդվածի 1-ին կետ)**

- Հայցվող պետության կողմից տրված վավեր վիզա և/կամ կացության թույլտվություն.
- անձի ճամփորդական փաստաթղթում մուտքի/ելքի կնիքներ կամ նմանատիպ հաստատում կամ մուտքի/մեկնման այլ ապացույց (օրինակ՝ լուսանկար).
- Հայցվող պետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց տրված նույնականացման քարտեր.
- Հայցվող պետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց տրված անցագիր (laissez-passer):

**Երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց
հետընդունման համար պայմանների մասով առերևույթ (prima facie)
փաստարկ համարվող փաստաթղթերի ընդհանուր ցանկ
(4-րդ հոդվածի 1-ին կետ և 8-րդ հոդվածի 2-րդ կետ)**

- Հայցող պետության համապատասխան մարմինների կողմից տրված՝ այն վայրի և հանգամանքների նկարագրությունը, որտեղ և որոնց պայմաններում անձը հայտնաբերվել է այդ պետության տարածք մուտք գործելուց հետո.
- որևէ միջազգային կազմակերպության (օրինակ՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի) կողմից տրված տեղեկություն անձի ինքնության և/կամ գտնվելու վայրի վերաբերյալ.
- տեղեկությունների հաստատում/զեկուցումներ ընտանիքի անդամների, ճամփորդակիցների կամ այլ անձանց կողմից.
- ցանկացած տեսակի փաստաթուղթ, հավաստագիր և վճարման հաշիվ (օրինակ՝ հյուրանոցի հաշիվներ, բժշկի/ատամնաբույժի այցելության նշանակման քարտեր, պետական/մասնավոր հաստատություններ մուտք գործելու քարտեր, մեքենայի վարձույթի պայմանագրեր, վարկային քարտերի անդորրագրեր և այլն), որոնք հստակ ցույց են տալիս, որ տվյալ անձը գտնվել է Հայցվող պետության տարածքում.
- օդային, երկաթուղային տրանսպորտային միջոցների, ավտոբուսի կամ նավի տոմսեր, որոնց վրա առկա է ուղևորի անունը, և/կամ ուղևորների ցուցակներ, որոնք ցույց են տալիս տվյալ անձի ներկայությունը և երթուղին Հայցվող պետության տարածքում.
- տեղեկություն, որը ցույց կտա, որ տվյալ անձն օգտվել է սուրհանդակի կամ ճամփորդական գործակալության ծառայություններից.
- պաշտոնական հայտարարություններ՝ արված, մասնավորապես,

սահմանապահ մարմինների աշխատակիցների և այլ վկաների կողմից, որոնք կարող են հաստատել տվյալ անձի կողմից սահմանը հատելու փաստը.

- տվյալ անձի կողմից դատական կամ վարչական վարույթների ընթացքում արված պաշտոնական հայտարարություն.
- տվյալ անձի կողմից արված հայտարարություն:

Հավելված 5

[Հայցող պետության զինանշանը]

[Հայցվող պետության զինանշանը]

.....

.....

.....

.....

.....

(Վայրը և ամսաթիվը)

.....

(Հայցող մարմնի անվանումը)

Հղում

.....

Ում՝

.....

.....

.....

.....

.....

.....

(Հայցվող մարմնի անվանումը)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԴԻՄՈՒՄ (7-րդ հոդվածի 3-րդ կետ)

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԻՄՈՒՄ

**Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի
կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց
հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի 6-րդ հոդվածի**

Ա. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Լրիվ անունը (ազգանունը ընդգծել)

.....

2. Նախկին ազգանունը (եթե փոխված է)

.....

3. Ծննդյան ամսաթիվը և վայրը

.....

4. Սեռը և ֆիզիկական նկարագրությունը (հասակը, աչքերի գույնը, առանձնահատուկ նշաններ և այլն)

.....

.....

5. Հայտնի է նաև որպես (նախկին անունները, այլ անուններ, որոնք օգտագործվում են (որով հայտնի է), կամ կեղծանուններ)

.....

.....

6. Քաղաքացիությունը և լեզուն

.....

.....

7. Ընտանեկան դրությունը՝ ☐ ամուսնացած ☐ չամուսնացած ☐ ամուսնալուծված ☐ ամուրի
(այրի)

Եթե ամուսնացած է, ամուսնու անունը

.....

Երեխաների (առկայության դեպքում) անունները և տարիքը

.....

.....

.....

.....

Լուսանկար

8. Հայցվող պետությունում վերջին հասցեն

.....
.....

Բ. ԱՄՈՒՍՆՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ)

1. Լրիվ անունը (ազգանունը ընդգծել)

.....
.....

2. Նախկին ազգանունը (եթե փոխված է)

.....

3. Ծննդյան ամսաթիվը և վայրը

.....

4. Սեռը և ֆիզիկական նկարագրությունը (հասակը, աչքերի գույնը, առանձնահատուկ նշաններ և այլն)

.....
.....

5. Հայտնի է նաև որպես (նախկին անունները, այլ անուններ, որոնք օգտագործվում են (որով հայտնի է), կամ կեղծանուններ)

.....
.....

6. Քաղաքացիությունը և լեզուն

.....

Գ. ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ)

1. Լրիվ անունը (ազգանունը ընդգծել)

.....

2. Ծննդյան ամսաթիվը և վայրը

.....

3. Սեռը և ֆիզիկական նկարագրությունը (հասակը, աչքերի գույնը, առանձնահատուկ նշաններ և այլն)

.....

4. Քաղաքացիությունը և լեզուն

.....

Դ. ՓՈԽԱԴՐՎՈՂ ԱՆՁԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

1. Առողջական վիճակը

(օրինակ՝ հնարավոր նշում հատուկ բուժօգնության անհրաժեշտության մասին. վարակիչ հիվանդության լատիներեն անվանումը)

.....
.....

2. Առանձնապես վտանգավոր անձ լինելու մասին նշում (օրինակ՝ ծանր իրավախախտման մեջ կասկածվող, ագրեսիվ պահվածք)

.....

Ե. ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԱՊԱՅՈՒՅՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1.

.....

(Անձնագրի համարը)

(տրման ամսաթիվը և վայրը)

.....

(n°-ում կողմից)

(վավերական է մինչև)

2.

.....

(Նույնականացման քարտի համարը)

(տրման ամսաթիվը և վայրը)

.....

(n°-ում կողմից)

(վավերական է մինչև)

3.

.....

(Վարորդական վկայականի համարը)

(տրման ամսաթիվը և վայրը)

4.

.....

(Այլ պաշտոնական փաստաթղթի համարը)

(տրման ամսաթիվը և վայրը)

.....

(n°-ում կողմից)

(վավերական է մինչև)

2. ԱՅԼ ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

.....

.....

.....

(ստորագրություն և կնիք/դրոշմակնիք)

Հավելված 6

[Հայցող պետության զինանշանը]

[Հայցվող պետության զինանշանը]

.....
.....
.....
.....
.....

(Վայրը և ամսաթիվը)

(Հայցող մարմնի անվանումը)

Հղում

Ո՞ւմ

.....
.....
.....
.....

(Հայցվող մարմնի անվանումը)

ՏԱՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

**Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի
կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց
հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի 14-րդ հոդվածի**

Ա. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Լրիվ անունը (ազգանունը ընդգծել)

.....

2. Նախկին ազգանունը (եթե փոխված է)

.....

3. Ծննդյան ամսաթիվը և վայրը

.....

4. Սեռը և ֆիզիկական նկարագրությունը (հասակը, աչքերի գույնը, առանձնահատուկ նշաններ և այլն)

.....

.....

.....

5. Հայտնի է նաև որպես (նախկին անունները, այլ անուններ, որոնք օգտագործվում են (որով հայտնի է), կամ կեղծանուններ)

.....

6. Քաղաքացիությունը և լեզուն

.....

7. Ճամփորդական փաստաթղթի տեսակը և համարը

.....

Լուսանկար

Բ. ՏԱՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Տարանցման տեսակը՝

☐ օդով

☐ ցամաքով

2. Վերջնական նպատակակետ երկիր՝

.....

3. Տարանցման այլ հնարավոր երկրներ

.....

4. Առաջարկվող սահմանային անցակետերը, տարանցման ամսաթիվն ու ժամը և հնարավոր ուղեկցող անձինք

.....
.....
.....

5. Ցանկացած այլ տարանցման երկրում և վերջնական նպատակակետ երկրում ընդունման ապահովում (հոդված 13, կետ 2)

☐ Այո ☐ Ոչ

6. Հայտնի՞ է տարանցման մերժման պատճառը

(հոդված 13, կետ 3)

☐ Այո ☐ Ոչ

Դ. ԱՅԼ ՆՇՈՒՄՆԵՐ

.....
.....
.....
.....

.....

(ստորագրություն, կնիք/դրոշմակնիք)

**Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի
կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց
հետընդունման (ռեադմիսիայի) մասին»
համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի
Հետընդունման մասին ծանուցում**

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ

(Իրավասու մարմին/Հայցող պետություն)

ՈՒՄ

(Իրավասու մարմին/Հայցվող պետություն)

ԱՄՍԱԹԻՎ _____

Փոխադրման մանրամասները

Տեղեկացնում ենք Ձեզ, որ _____ -ին _____

(Հայցող պետության անվանումը)

միջազգային սահմանային անցակետով հետևյալ անձը (անձինք) նշված երթուղով
վերադարձվելու է (են) _____ :

(Հայցվող պետության անվանումը)

Ամսաթիվ	Ժամանման ժամ	Նպատակակետ	Մեկնման ժամ	Չվերթի համար

Անձնական տվյալները

Անունը և ազգանունը	Ծննդյան ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)	Սահմանի հատման փաստաթուղթ հմ. ...
Անունը և ազգանունը	Ծննդյան ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)	Սահմանի հատման փաստաթուղթ հմ. ...
Անունը և ազգանունը	Ծննդյան ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)	Սահմանի հատման փաստաթուղթ հմ. ...
Անունը և ազգանունը	Ծննդյան ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)	Սահմանի հատման փաստաթուղթ հմ. ...
Անունը և ազգանունը	Ծննդյան ամսաթիվը (օրը, ամիսը, տարին)	Սահմանի հատման փաստաթուղթ հմ. ...

Տեղեկություններ ուղեկցող անձանց վերաբերյալ (ուղեկցող անձանց քանակը՝ _____)

Անունը և ազգանունը	Անձնագրի տեսակը և համարը
Անունը և ազգանունը	Անձնագրի տեսակը և համարը
Անունը և ազգանունը	Անձնագրի տեսակը և համարը

Տեղեկություններ՝ առողջական վիճակով կամ տարիքով պայմանավորված ուղեկցության, հատուկ խնամքի կամ օգնության կարիք ունեցող անձի մասին

Անունը և ազգանունը	Պատճառները
Անունը և ազգանունը	Պատճառները

Կնիք/դրոշմակնիք	<p>Իրավասու մարմնի ներկայացուցչի ստորագրությունը</p> <p>_____</p> <p>Հեռախոս՝ _____</p> <p>Էլեկտրոնային փոստ՝ _____</p>
-----------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025 թվականի հուլիսի 21-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիասիայի) մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**



Նելլի Սարոյան